



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan,
Republic of Armenia (+374 60) 71-00-78, (+374 60) 71-00-79, int.rel@ysu.am, www.yasu.am

№ 194 « 11 » 09 2020 թ.

Արձանագրություն N 194

**ԵՊՀ Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի գիտական խորհրդի
2020թ-ի սեպտեմբերի 11-ի նիստի**

Նիստին ներկա էին գիտխորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 23-ը:

1. ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. **Հենգել Մանուչարյանի «Արարատիզմ. Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում»** մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին հարցը:
2. ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ **Նարեկ Գալստյանի «Միջազգային տարածաշրջանագիտության հիմունքներ»** ուսումնական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
3. Թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
4. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնում **«Կիրառական քաղաքագիտություն»** մագիստրոսի կրթական ծրագրի հայտի ներկայացման մասին հարցը /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան/:
5. Դոցենտի կոչման դիմումի քննարկում և մրցույթի անցկացում /զեկ.՝ գիտ. քարտուղար Գ. Բալասանյան /:
6. Ռոտացիայի ցուցակները հաստատելու մասին հարցը / զեկ.՝ դեկան, պրոֆ. Գեղամ Պետրոսյան/
7. Ընթացիկ հարցեր:

Խորհուրդը որոշեց.

1. ա/ Ընտրել հաշվիչ հանձնաժողով և քվեաթերթիկում գրանցել դոցենտի կոչման համար ք.գ.թ. Առնակ Մարգարյանի անունը:
բ/ Անցկացնել փակ գաղտնի քվեարկություն: Փակ գաղտնի թվեարկությունից հետո գիտական խորհրդի նիստը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը, ըստ որի խորհրդի 28 անդամներից քվեարկությանը մասնակցել են -ը և ձայները բաշխվել են հետևյալ կերպ՝
Դոցենտի կոչման համար՝

Առնակ Սարգսյան – կողմ, դեմ չկա, անվավեր քվեաթերթիկ չկա:

2. ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր, փ.գ.դ. **Հենգել Մանուչարյանի «Արարատիզմ. Հայոց ազգայնականությունը պատմության շրջադարձային հանգրվաններում»** մենագրությունը երաշխավորել հրատարակության:
3. ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի դոցենտ **Նարեկ Գալստյանի «Միջազգային տարածաշրջանագիտության հիմունքներ»** ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:
4. Հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման.

ա/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի ասպիրանտ **Նարեկ Սուքիասյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Կառուցվածքային և կոնստրուկտիվիստական չափումների էվոլյուցիան ՀՀ արտաքին քաղաքականության մեջ (հայ-ռուսական հարաբերությունների օրինակով 2008-2020թթ.)»**, ԻԳ. 00.02- Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարգարովին:

բ/ ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ **Սոնա Մխիթարյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«ԵՄ Արևելյան գործընկերության ծրագրի շուրջ համակիրոպական խորհրդարանական կուսակցությունների դիսկուրսը»**, ԻԳ. 00.02- Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ, միջազգային հարաբերություններ մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեոյանին:

գ/ ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ **Դավիթ Հակոբի Թորոսյանի** թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել **«Զինձառայողների քաղաքական գիտակցության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ-ում»**, ԻԳ. 00.01- «Քաղաքական գիտության տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար: Գիտական ղեկավար հաստատել ք.գ.դ., պրոֆեսոր Տ. Քոչարյանին:

5. Երաշխավորել ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքագիտության բաժնում **«Կիրառական քաղաքագիտություն»** մագիստրոսի կրթական ծրագրի հայտի հաստատումը:
6. Ռոտացիայի ցուցակները հաստատել:

Գիտական խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Գ. Պետրոսյան

Գիտական խորհրդի քարտուղար, դոցենտ

Գ. Բալասանյան